# Հայ գրականության օլիմպիադայի
# հանրապետական փուլի հարցաշարեր

## X դասարան

## (տևողությունը՝ 180 րոպե)

1. Հայոց հին դիցարանը։ Արամազդ, Վահագն,Անահիտ, Աստղիկ, Տիր, Միհր։ Ո՞ր աստվածներն են առկա «Սասնա ծռեր» էպոսում։ Ի՞նչ զրույցներ գիտես նշված կամ այլ աստվածների մասին։ Պատմի՛ր մի քանի տողով։ 5 մ.

2. Ո՞վ է Եղիշեն։ Նկարագրի՛ր Եղիշեի ներկայացրած պատմական երեք հերոսների՝ քո ընտրությամբ։ Ինչպիսի՞ ողբ է նրա ողբը. գրի՛ր մի քանի տող։ «Վասն հայրենեաց, վասն հաւատոյ» կարգախոսը՝ որպես հաղթանակի առհավատչյա։

5 մ.

3. Սայաթ-Նովան՝ «խալխի նոքար»։ Սոցիալական տաղերի արդիականությունը։ Սայաթ-Նովայի հրաժարումը փառքից ու հարստությունից։ Նշի՛ր շրջասույթներ Սայաթ-Նովայի մասին։ 5 մ.

4. Պետրոս Դուրյանը՝ սիրերգակ։ Վերլուծի՛ր Դուրյանի սիրային բանաստեղծություններից (առնվազն 2)՝ քո ընտրությամբ։ Մեծարենցը՝ Դուրյանին (1-2 քառատող)։ Դուրյանին բնութագրող շրջասույթ(ներ)։ 5 մ.

**Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան**